



[185558]

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«16» հունիս 2016 թ.

N 66-Ա/1

**ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻ ԱՇԽԱՏՈՂԻ ՀԱՄԱՐ ԳՈՐԾԱՏՈՒԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՄԵՐԺԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշման N 1 հավելվածի 12-րդ կետի «դ» ենթակետի, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 12-ի N 493-Ն որոշման կիրարկումն ապահովելու նպատակով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Օտարերկրացի աշխատողի համար գործատուին աշխատանքի թույլտվություն տրամադրելու, մերժելու, ինչպես նաև աշխատանքի թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու լիազորությունները վերապահել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության պետին:

2. Նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության պետին՝

1) ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 12-ի N 493-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի (այսուհետ՝ կարգ) 2-19-րդ կետերով նախատեսված դրույթների իրականացումը՝ կարգով սահմանված ժամկետներում,

2) երկօրյա ժամկետում կարգի 8-րդ կետով նախատեսված աշխատանքի թույլտվության ձևաթղթերի տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև մինչև 2016 թվականի ավարտն անհրաժեշտ աշխատանքի թույլտվության ձևաթղթերի քանակի վերաբերյալ առաջարկությունը ներկայացնել նախարարության